

ՊՍԱԿՈՒՄԾ ՍԱՀՍԿ ՄԵՍՐՈՎԲԵԱՆ ՄՐՑԱՆՍԿՈՎ:


Ա.

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՄԱՐԻԿԱՆ

Խօսուած Բագուի Ս.
Լուսաւորիչ եկեղեցում
1903 ժախին

Երկրորդ տպագրութիւն
Առաջինը Կ. Պօլսում Ի հաշիւ Սահակ Մեսրոպեան
ռւսումնական մասնաժողովի

ՆԵՐՍԷՍ ՔԱՀԱՆԱՅ ՏԵՐ-ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ
(միաբան Բագուի Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ):



Թ Ի Ֆ Լ Ի Ս

ԵՆԲՏՐԱՅԱՐԺ ՏՊԱՐԱՆ ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆԻ ՊՕԼԻԹԵՑՍԿ. 7.

1908

A P M.
2-909a

1 OCT 2009

ՊՍԱԿՈՒԱԾ ՍԱՀԱԿ ՄԵՍՐՈՎԲԵԱՆ ՄՐՑԱՆԱԿՈՎ:

28
S-29

904

Ա.

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՄԱՐԴԿԱՆ

Խօսուած Բազուի Ս.
Լուսաւորիչ Նկեղեցում
1903 յայիսին

3007

Երկրորդ տպագրութիւն
Առաջինը Կ. Պօլսում Ի հաշիւ Մահակ Մեսրոպեան
Ուսումնական մասնաժողովի

ՆԵՐՍԷՍ ՔԱՅԱՆԱՅ ՏԵՐ-ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ
(միաբան Բազուի Ս. Լուսաւորիչ Նկեղեցու)

Թ Ի Ֆ Լ Ի Ս

ԵԼԵՔՏՐԱՅԱՐԺ ՏՊԱՐԱՆ ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆԻ ՊՈԼԻՑԵՍԿ. 7.

1908

05 NOV 2013

6786



39961-63



Պաշտելի ամուսնու վաղաթառամ երիցունի

ԱՆՆԱՅԻ ՏԷՐ-ԿԱՐԱՊԵՏԵԱՆՅ

և անդրանիկ՝ սրտիս հատոր խամրած ծաղիկ
Յակովբիկիս յիշատակին նուիրում է գրքոյկս
և ամբողջ արդիւնքը յատկացւում է Կ. Պօլսի
Ս. Փրկչեան ազգային հիւանդանոցին:

Ն. Բ. Տ.-Կ.

ՄԱՅԻՍ է, ամիսների ամենագեղեցիկն ու սիրելին: Ի դուր չեն բանաստեղծները կարծում, որ Արարչագործ Աստուածը այս ամսում ստեղծեց աշխարհը: Ո՞վ չէ փորձել իւր կեանքում՝ երբ և իցէ այդ ամսում, պայծառ արեւի շողերը պատռելով դուրս գալ դէպի ծոց բնութեան, դէպի գիւղի անբուն պահապան լեռան լանջը: Ի՞նչ սքանչելիքներ, ի՞նչ քաղցրութիւններ: Բնութիւնն իւր ամեն պերճանքներով ու զարդերով արթնացել է, և տիեզերքի զարթօնքն է կատարում, դաշտերն ու լեռները իրենց երփներանգ գոյներով, թռչուններն իրենց սքանչելի մեղեդիներով, տեսարանք ու հանգիստարանք իրենց աստուածային գեղեցկութիւններով, հրճում և ցընծում են: Խեղճ մարդ, կամայ ազամայ խոնարհեցնում ես անգոր ճակատդ տիեզերական սեղանի առաջ, Աստուծոյ անհունութեան առաջ, և քո խեղճութիւնը խոստովանում: Եւ ինչո՞ւ չխոնարհուիս՝ երբ դաշտի ու լեռան պէս ծովի ալիքները վէտ-վէտ կը խաղան, երկնից ալախօսիկ

թեւաւորք թիւ թիւ կը թռչին, երկրի շաղն ու ցօղը բիւր-բիւր աղամանդներ դարձած աչքեր կը խողրտեն, առուններ և վտակներ ուրախ շրջիւնով բնութեան վերանորոգում կ'աւետեն: Երկնքի օրէնքն է իշխում, որ վերջ չունի: Անհուն խորհրդաւորութեամբ համակուած սրտիդ հեռաւոր անկիւններից ուրախական բաբախիւններ կը թնդան: Մարդ կը ցնծայ, կը զմայլի:

Բայց ի՞նչ սարսափելի է դառնում մեր ուրախական թրթիռները, մեր մտքի պայծառ պատկերները, երբ այդ պահուն լերան լանջից դիտենք մեր ոտների տակ փռուած գերեզմանատան, անձայն և անխօս շիրիմների կոյտերին, աւեր և կիսաւեր արձաններին: Որոնեցէ՛ք այդ տեղ ձեր սիրելիների շիրիմները: Աչքով փնտռեցէ՛ք ձեր սրտերի արձագանքները, ձեր հոգւոյ հատոր հրեշտակներին: Մի քանի օր առաջ, նրա ոսկեթել խոպուպիքներն էիք համբուրում, նրա շրթունքներից քաղցրահնչիւն մեղեդիներ լսում, նրա շունչը շնչում, նրա կանաչ-կարմիր արեւով խընդում, այժմ բնութեան անողորմ հարուածով սառը հողի տակը կը պառկէ մինակ, հեռու սրտիցդ, հոգուցդ, գրկիցդ:

Մայիսն ու արեւը անգօր են քեզ յետ կասեցնելու, երկրի շաղերն ու ցօղերը ոյժ չունին սրտիդ վրայ, երկնքի դայլայլիկները իրենց հրապոյրները կը կորցնեն: Շտապում ես, շտապում ես—գրկելու այդ շիրիմը և քո աչքերիդ ան-

չափ շաղերն ու ցօղերը թափելու, խառնելու երկրի թափած արցունքներին: Ի՞նչ հառաչանքներ ասես՝ որ չես թափում, ի՞նչ հեծկլտանքներ ասես՝ որ դուրս չի թափւում հոգւոյդ խորերէն, սիրտդ հրաբուխ է դառնում այդ ըռպէին: Արար աշխարհ սեւ են հագնում, ամեն ինչ սարսափ և սարսուռ ազդում վիրաւոր զգացմանց վրայ:

Հազար անգամ օրհնեալ լինի այն հաւատն ու վարդապետութիւնը, որ յանկարծ օգնութեան կը գայ, բիւր անգամ ապրի այն յոյսն ու շունչը, որ մենաւոր անշարժութեանդ ապաւէն կը դառնայ: Ձայներ կը գան մխիթարական «Յաւոց հովտից», որ գերեզմանից անդին էլ կեանք կայ, անմահութիւն կայ: Ձե՛ս տեսնում երկրի վերայ կեանքի յաւիտենականութեան ստուերական պատկերը: Ձե՛ս նկատում կեանքի անմահութիւնը երկրի ծոցից, երկրի խորքերից սկսուող դէպի երկնից աստուածակերտ տաճարը դիմելիս:

Մարդկային ազգի գերեզմանն ու երկրաւոր կեանքը յարութեան գրաւականն են: Յարութեան ձայներ են գալիս մեր ականջին, մեր հաւատն ու բնութիւնը սրբում են մեր աչքերի ցօղերը, մեզ ոտի ենք կանգնեցնում և հարց ենք տալիս. Ուրեմն՝ կա՞յ յարութիւն: Բայց ի՞նչ է յարութիւնը և ինչ խորհուրդ ունի:

Յարութիւն կը նշանակէ վեր կենալ, յառնիլ, մեռած մարդը կենդանանայ, կամ առհասարակ

ամեն մի անշարժութեան դատապարտուած՝ շար-
ժուն դառնայ, կեանք ստանայ: Մարդիկ մեռելու-
թեան գրկից դուրս կը գան, կազատուին, յարու-
թիւն կառնեն: Այս է բղխում տիեզերքի ծոցից, եր-
կրի ներսից: «Քրիստոս յարեալ» այսպէս երգուեց
սրբազան կամարներէս տակ: Ինչ ծանր բան կը
լինէր եթէ սարսափի և ահի ըռպէներէց յետոյ,
Քրիստոս յարութիւն չառնէր: Ի՞նչ կը լինէր մեր
դրութեան հետեւանքը, եթէ մեր գրկած, մեր
փարուած շիրմի վրայ երկնային լոյսը չգար
օգնութեան. — բայց մեր Տէրը յարեալ: Աստուա-
ծային պարգեւներէ ամենամեծն ու ամենաաքան-
չելին՝ մեր կեանքի արեւը, արժէք և գին երբէք
և երբէք չէր ունենալ «եթէ Քրիստոս չիցէ յարու-
ցեալ»: այլ չեմ ասում որ «ընդունայն է քարոզու-
թիւնն մեր», այլ աւելի առաջ գնալով՝ «ընդու-
նայն են հաւատքն ձեր»:

Այո, մարմնի համար կայ յարութիւն, իսկ
հոգւոյ համար անմահութիւն. — առաջին խնդիրն
է, որ մեզ կը զբաղեցնէ:

Իսկապէս ինչի՞ նման կը լինէր մեր կեան-
քը, մեր նեղութիւնները, մեր կրթութիւնները,
մեր ստացած ուսմունքները, եթէ Քրիստոս յա-
րութիւն առած չլինէր: Մեր շուրջը՝ մեր անձը՝
մեր հոգին միշտ խոցեր ու վէրքեր, Քրիստոսի
ամբողջ քարոզութիւնը զուր կանցնէր: Եւ երբէք
քրիստոնէութիւնը հիմք չէր ստանալ, եթէ յարու-
թեան խորհուրդը չըմբռնէինք: Ի՞նչ էր Քրիստոսի

առաքեալների քարոզը, մի՞թէ տեղովը յարու-
թեան քարոզ չէր. եւ մի՞թէ դրանից չէ կա-
խուած մեր ճշմարիտ քրիստոնեայ լինելը կամ
չլինելը. թէ եւ առաքեալները չնայած բանիցս
անգամ Տիրոջից զգուշութիւն էին ստացել՝ չփա-
խենալ, բայց մատնութեան ըռպէին թողեցին ու
փախան, ամենաքաջ առաքեալն անգամ մինչեւ
հաւախօսը երեք անգամ ուրացաւ:

Եթէ այս այսպէս է, ապա ի՞նչպէս պատա-
հեց որ վախկոտ և կասկածոտ առաքեալները և
ուրացող հրէաները յանկարծ համոզուեցին որ
Քրիստոս յարեալ:

Նրանք տեսան իրենց վարդապետը՝ իրենց
հօր կարծած ուսուցիչը, գերի՝ խեղճութեան
դատապարտուած՝ կալանաւոր իբրեւ մի յան-
ցաւոր, մի քանի ողորմելի զինուորներ միայն թո-
կերով կապկապում էին նրա ձեռները և ոտերը,
և երկինքը լռել էր, ձայն ծպտուն չկար, հրեշ-
տակների գնդեր չէին իջնում օգնելու և արձա-
կելու: Փարիսեցիներ՝ կեղծաւորներ, նրան տան-
ջում են՝ դատում են, երկնքի դռները փակուել
են՝ արդարութեան որոտ և կայծակներ չեն
թափում չարագործաց գլխին: Թուլացան սրը-
տերը առաքեալների, յուսակտոր եղան, թողե-
ցին ու փախան: Կարծես միայն երկիւղը չէր որ
իրենց վարդապետին կապանքների մէջ թողեցին,
այլ՝ այն որ տեսան, նրանց ճանաչած կամ ա-
ւելի ճիշտ ասած հասկացած Աստուծոյ Որդին՝

գերի, կամ կեանքի և մահուան տնօրէնը՝ մահուան դատապարտուած: Եւ ինքը իրեն չի կարողանում պաշտպանել. և իրենց երեւակայած զօրութիւններն ու զօրքերը օգնութեան չեն եկել: Ուրեմն ինչ պիտի անենք—մըմնջում էին թերահաւատները—փախչիլ, պահուելով քաղաքի անկիւններում, մեկուսացած մնալ, մեր ամօթը ծածկել, մեր կարմրած երեսները չցոյց տալ:

Բայց յանկարծ այդ անելանելի յուսահատութեան մէջ, մտքերի թանձրացած մշուշի մէջ, Յարուցեալ Փրկիչը, իրենց Տէրը երեւաց մէկին կամ միւսին: Մի երեւոյթ բնաւ բաւական չէր, թերահաւատութեան թանձր քօղը պատռելու, և կատարեալ հաւատի բերելու: Յարուցեալ Փրկիչը շատ լաւ էր ճանաչում նրանց թերութիւնները, և ահա առիթը բաց չէ թողնում միջոցներ տալու իւր աշակերտներին համոզուելու իւր յարութեան մէջ:

Ձարմանալի տնօրինութեամբ ամենից առաջ այն փառաւոր պատուին՝ յարուցեալ Յիսուսին տեսնելուն արժանացան, ոչ թէ փախած պահուելու անհաշիւ աշակերտները—այլ այն կիներ՝ մեղքերի տղմի մէջ թաթախուած, դեւերով և սատանաներով լեցուն—որ չոքած Յիսուսի ոտների առաջ քառութեան արցունքներ և նարդեան իւղեր թափելով աստուածային ոտերի վրայ՝ իւր գեղանի վարսերով սրբում էր և ողորմութիւն ու թողութիւն հայցում: Այժմ չկար ոչ մի

սեւ բիծ անցեալի, բիւրեղի նման մաքուր էր, աստուածային սիրոյ կրակով լեցուն, նրա միայն փափաքը նրան տեսութեան կարօտն էր, բոց և կրակ դառել այն իւր սրտի մէջ, հրեշտակի տեսքը, երեւոյթն անգամ անգօր էր նրան մխիթարելու. ուստի և թախանձագին հարց տուեց. «Ոչ գիտեմ ուր եղին գնա»: Մագդաղենացի Մարիամը իւր աղբերաբար թափուող արցունքները ծածկելով, քաշուելով մեկուսի խնդրում էր անծանօթից տալ իրեն իւր տիրոջ մարմինը, որի համար և շտապել եկել էր: Ո՛վ հրաշք, փոխանակ դիակ գտնելու և ստանալու, իւր ծանօթ Տէր Յիսուսը կանգնեց իւր առաջին և իւր սիրելի քնքոյշ ձայնը հնչեց իւր աւանջում, «Մարիամ». ուրախութիւնից կարկամեց և փետացաւ, զի ամենամեծ փառքը գտաւ, իւր Տիրոջ յարուցեալ տեսաւ, միմիայն մի բան դուրս թռաւ. նորաանգաջ շրթունքից, «Րաբունի». և ապա պապանձուեց ու լռեց: Մեռեալը վեր է կացել, գլորեալը կանգնել է, կամեցաւ փարուիլ, գրկել, լիզել նրա ոտները, շորերի քղանցքները, բայց յարուցեալի «Մի մերձենար յիս» հրամանը՝ յետ կանգնեցրեց այլևոք սիրան ու դողդողացող ձեռքերը: Երկիւղածութենից ու ուրախութենից ապուշ կտրած հնազանդուեց և շտապեց աշակերտներին յայտնելու և աւետելու, թէ «Տեսիլ գտէր»: Ուրախական զգացումները պաշարեցին ամենքին, աստուածային մխիթարիչ կայծակը տնկուեց բոլո-

րի սրտերում, և քաղցր ժպիտներ արձակեցին: Տխուր ու սարսափահար թերահաւատները լցուեցան անսահման ցնծութեամբ: Եւ միթէ՞ այս րոպէիս, համարեա քսան դար գլորուելուց եղական դէպքից, չէ՞ փառաւորում ձեր սրտերը, հաւատի կայծը չի՞շողում ձեր հոգիները մէջ:

Վստահ չէր մեր Տէրը առաքեալների հաւատի կատարելութեան, ուստի տեսնում ենք նրան կանգնած իւղաբեր և զգայուն կանանց առաջ, որոնք եկել էին հրէական ծէս կատարելու, մեռեալ մարմինն օծելու, և հարց է տալիս յարուցեալ շրթունքներով աւելի մեղմ քան Գեթսեմանիի զեփիւռը, «Ո՞ղջ էք»: (Փախել էին սարսափահար պահապանները և պատմել հրեշտակի երեւան գալը, ծանր քարի շարժուիլ ու գլորուիլը: Աւելի սարսափահար ըմբոսները դիմեցին մամոնայի ոյժին, լռեցնելու համար. բայց ո՞ր ծածուկն է գաղտնի մնացել: Սուտ հռչակուած լուրը կամաց կամաց տարածուեց և իւղաբեր կանանց տեսածին ոյժ և զօրութիւն տուեց: Կանայք շտապեցին հաղորդելու առաքեալներին, որ հաւաքուին Գալիլեա ըստ իւր նախկին որոշման:

«Եւ ասեն թէ արդարեւ յարեաւ Տէր և երեւեցաւ Սիմոնին»։ Բայց թէ ի՞նչպէս երեւաց և ի՞նչ խօսքերով կռեց հաւատի դռները ուրացող առաքեալի սրտում՝ մնաց մութ աւետարանիչներին:

Իսկ այսպէս մութ և աննկատ չանցաւ չոր-

րորդ յայտնութիւնը կամ չորրորդ անգամ երեւնալը ըստ գրոց: Տխուր և մտամոլոր առաքեալներից երկուսը՝ կարծես մեծ քաղաքի աղմուկներից, կամ թէ չէ՝ տարածած լուրերից ազատուելու և կամ չլսելու համար դուրս էին եկել քաղաքից և գնում էին դէպի մի գիւղ: Յանկարծ մի անծանօթ մարդ հանդիպեց տխրադէմ ուղեւորներին և նախնաւանդ սովորութեամբ հարցրեց տխրութեան պատճառը: Կասկածը տիրեց առաքեալներին, և անկարող լինելով անպատասխան թողնել ասացին, «Դ՞ո՞ւ միայն կաս յերուսաղէմ»։ «Զի՞նչ» զարմացական հարցին՝ թերահաւատ ուղեւորները պատմեցին քաղաքում խօսւող և տարածուած բոլոր լուրերը: Եւ երբ նկատեց անծանօթ օտարականը խեղճերի թերութիւնն իրենց հաւատի մէջ «սրտի ծանրութեան» պատճառով, յիշեցրեց հին մարգարէականը Աստուծոյ փառքի մասին: Եւ ապա նստելով հացի՝ իրենց ցամաք պարէնի շուրջը, անծանօթը կոտորեց հացը և բաժանեց խեղճ առաքեալների աչքերը այժմ միայն բացուեցան և տեսան իրենց Տիրոջ, կարծես վերնատուն նստած անեղ ընթրեաց երկրորդ օրինակն էր ցոյց տալիս. միայն այս անգամ նիհար և աւելի գունատ: Չմնաց երկար իրենց մօտ՝ իրենց կարօտն առնէին, շտապեցին ուրախ և զգացուած հաղորդելու միւս առաքեալներին: Նրանց տեսքը խրոխտ էր և հաստատուն: Մի եւս թախիծ, մի սուգ և մի կասկած:

Յայժմ յարուցեալ Փրկիչը բոլոր առաքեալներին խմբովին չերեւաց. կարծես զիտմամբ փորձելու և համոզուելու թէ արդեօք որն «ի նոցանէ» աւելի հաստատուն հաւատ ունի իւրեանց վարդապետի վերաբերութեամբ: Այս անգամ Յիսուս երեւաց տասին միասին, հէնց այն պահուն երբ ահից և վախից ստիպուած փախել և փակուել էին մի սենեակում, և կարծես նոր յայտնութեան էին սպասում: Յանկարծ Յիսուս կանգնեց խմբի առաջ և իւր աստուածային բարբառով ասաց, «Սաղաղութիւն ընդ ձեզ»: Նորա մարմնի անսովոր տեսքը և մեռելներից յարութիւն առնելու սարսափելի և անսովոր իրողութիւնը վախ և շփոթմունք առաջ բերաւ: Յիսուս ցոյց տուեց իւր ծակծակուած ձեռքերն ու ոտքերը, նրանց ամաչացնելու և հաւատի մէջ ամրապնդելու համար: Հաւատի և զարմանքի և ուրախութեան յոյզերը խառնուեցան նրանց հոգւոյ մէջ: Ներկայ չէր խմբում Թովմասը, այս ամենամեծ կասկածոտն ու թերահաւատը, ուստի և վարանում էր համոզուելու աշխարհիս այս ամենամեծ իրողութեան, որը արտայայտելու անգոր են մեզ նման խեղճուկ լեզուները և իմ թոյլ բառերը: Ուստի և երեւաց անգամ մի եւս աշակերտներին, և իմանալով աստուածաթափանց մտքով Թովմասի սիրտը, կոչեց նրան և հրաւիրեց մատը դնել իւր վէրքերին ու խոցուած ու գեղարդախոց կողերին՝ ասելով, «Մի լինիր ան-

հաւատ, այլ հաւատացեալ»: Կասկածոտ առաքեալը շօշափեց, հաւատաց և ընկաւ գետնին, «Տէր իմ, Աստուած իմ» բարբառելով: Տէրը չկըտրեց իւր այցերը առաքեալներին վստահութիւն և հոգի ներշնչելու համար, հանդիպեց ձուկ որսալու ժամանակ, հանդիպեց Սիմոնին և երեք նշանաւոր աւետարանական խօսքերն ուղղեց, «Սիրէս զիս»:

Այսպէս ինն անգամ երեւալով, աշակերտները ձեռքերով շօշափեցին, աչքերով տեսան. իսկ տասներորդ անգամ երեւաց Ձիթենեաց դաւարագեղ սարի լանջերի վրայ, բայց այդ չէ մըտնում իմ ծրագրի մէջ: Ահա, եղբարք սիրեցեալք, այն վկայութիւններն ու փաստերը, որոնցով համոզուեցան թերահաւատ առաքեալները և հաւատի անշէջ կրակով լցուեցան, ու ընդ հուր և ընդ սուր անցնելով աներկիւղ հերոսաբար քարոզոցին իրենց տեսածն ու լսածը: Նրանք չէին կարող ընդ գրուանաւ պահել լոյսի յաղթանակը, Յիսուսի փառաւոր յաղթանակը մահուան վրայ:

Եթէ այսքան խաւարով պատած առաքեալները, թերահաւատ աշակերտները համոզուեցան ու հաւատացին, որչափ եւս առաւել մենք պիտի համոզուինք ու հաւատանք, քանի որ մենք ի մանկութենէ լոյս և միայն լոյս ենք տեսել և յարութեան քարոզը լսել: Բաւական չէ՞ միթէ յիշել Յիսուսի դատարկացեալ գերեզմանը, որ մեր բոլոր սիրելի նշեցեալները կը զարթնին:

նման նմին յարութիւն կ'առնեն: Յուշ լիցի
Քրիստոսի խօսքերը թէ, Նշան էք խնդրում, տե-
սէք թաղման և յարութեան նշանը: Դարեր շա-
րունակ մահը հարուածներ է տուել, բայց յա-
րութեան հաւատն ու յոյսը վերակենդանութեան
շրջանի մէջ է մտցնում մահացող մարդկութիւնը:
Միթէ Քրիստոսի յարութիւնը մարդկային հո-
գիւնների փառաւոր պատկերը չէ, և կամ նրանով
չէ հաստատում մարդու կոչման իսկութիւնը, և
կամ նրանով չէ վերանում հոգեւոր և մարմնաւոր
կեանքի հակասութիւնը, եւ հետեւապէս հոգեպէս և
մարմնապէս ելնում մեռելային շրջանից, Ի՞նչ քաղ-
ցըր յոյս, ինչ աննման բերկրութիւն: «Բերկրու-
թիւն է ամեն տղոց, Քրիստոս յարեալ ի մեռելոց»,
ասում է բանաստեղծը: Ուրեմն անբերկրի և հա-
մարձակ գնացէք կեանքի մոռյալ հովտի միջով:
Կը գան ձեր առաջ մոռյալ և սեւ ուրուականներ,
մի՞ք վախենալ, մի՞ք վախենալ—դրանք չեն կեանքի
պարագանքերը, այլ այդ երկարածիզ ճանապարհի
ծայրին անմահ դռների կը հանդիպիք, վերան ոչ
թէ մոռյալութեան և յուսահատութեան բուն է թե-
ւատարած, այլ «Քրիստոս յարեալ», երկիր շար-
ժող, երկինք զմայլեցնող լոյսն է ծագած:

Քրիստոս յարեալ, կասկած չկայ.

բնութիւն համայն է մեզ վկայ:

Այս է ահա յարութեան յոյսը, որ պիտի
կրակէ բոլոր քրիստոնեայ սրտերը: Յարութեան
զօրութիւնը ոչ տեղ, ոչ ժամանակ, ոչ երկիր,


ոչինչ չէ իմանում, այլ ազդում և թափ է ան-
ցնում ամեն մի լեռ քարով, ամեն մի կարծր սըր-
տով, միայն գիտակցական անհաւատութիւն է,
որ կարող է թուլացնել լոյսի ճառագայթների ա-
նարատութիւնը, բայց մարել ոչ երբէք:

Յարութեան հաւատքն է մեր կեանքի հիմքն
ու ապագայ երաշխիքը, ուստի և եկեղեցական
իմաստուն Հայրեր անծայրածիր շնորհքով իւրա-
քանչիւր տարի այս միջոցը հաստատել են միշտ
և միշտ քարոզելու, լսելու և ցնծալու, այլ և
իւրաքանչիւր եօթնակի գլխին պէտք է յի-
շենք: Երկիրդած սրտեր, ջերմեռանդ քրիստո-
նեաներ, ես կարծեմ ձեզ բաւ է այսչափս, ոչ
թէ միայն համոզելու, այլ զօրացնելու և յիշեց-
նելու: Բայց ի՞նչ ասենք նշան խնդրողներին:

Գուցէ չէ բաւական այս բացարձակ ճշմար-
տութիւնը, որ քրիստոնէական հաւատի հիմքն
ու դաւանանքը Քրիստոսի յարութիւնն է, հե-
տեւապէս և մեռելոց ընդհանուր յարութիւնն է:
Այսպէս է ընդունում Հայոց Եկեղեցին, այսպէս
է դաւանում:

Նախ՝ որ Յիսուս ինքը յարեալ, հետեւապէս
«մահուամբ զմահ կոխեաց և յարութեամբն իւրով
մեզ զկեանս պարգեւեաց»: Երկրորդ՝ չէ որ մարդը
ստեղծուած է ըստ պատկերի Աստուծոյ և նրա
անսահման էութեան: Իսկ ինչպէս կարող է
մարդը լինել աստուծոյ «պատկեր» եթէ անմա-
հական չէ, հետեւապէս և յարութեան անեղ խոր-

3994-67



հրդին ենթակայ և ընդունակ: Երրորդ՝ դատեցէք, քննեցէք մարդուն արարչագործութեան ընդէնքը, նայեցէք բոլոր փրկիստիայական տեսակէտներէց և կը գտնէք միայն յարութեան խորհրդի պատկերը, հանգերձեալ կեանքի նախապատկերը: Զորրորդ՝ Աստուած տիեզերքի սիրոյ թագաւորութեան լրիւ բովանդակութիւնը ու Տէրը լինելով, մի միայն սիրոյ հաղորդակցութիւն ունի իր արարածներէ հետ, հետեւապէս և այդ անսահման սիրով պիտի քաշէ ձգէ աշխարհի բոլոր ելեքարական հոսանքների միաւորումից աւելի հզօր շաւղով գէպի իրեն, միայն և եթ իր անցած ճանապարհով, քանի որ Նա է Աստուած մահկանացուների. «Աստուած է՛ մեռելոց, այլ կենդանեաց»: Հինգերորդ՝ միթէ՞ իրագործուած կը լինէր Աստուծային կամաց ամենավսեմ խորհրդաւորութիւնը ու ամենափառաւոր նպատակը, եթէ մարդիկ անմահութեան և յարութեան ընդունակ չլինէին, այլ անցական և ժամանակաւորի ենթակայ: Ո՛վ հաւատում է աշխարհի գիտութեանց և լուսաւորութեանց կատարեալ յառաջադիմութեան, նա չպէտք է վարանի հաւատալու գիտութեան ամենամեծ աղբիւրին, յարութեան:

Վերջապէս ինչ էք կարծում, հնար կը լինէ՞ր հաւատալու բարութեան և ճշմարտութեան յաղթանակին, եթէ չհաւատայինք բարութեան ամենափառաւոր պատկին, մեռելոց յարութեան:

Կայ արդեօք մէկը՝ որ չհաւատայ արդարութեան թագաւորութեան երբ և իցէ իրագործման ճակատագրաց վեհապետի տնօրինութեամբ, հետեւապէս և չպէտք է լինի որ թերացող հաւատի մէջ: Եթէ մի քիչ աւելի գնանք առաջ, աւելի պրպրտենք նիւթապաշտների, բնազանցական տեսութիւններով զբաղւող գիտունների գիրքերը, կը գտնենք մի օրէնք, որ մարդու գիտակցութիւնը և բնական էութիւնը չի ոչնչանում, յաւիտենական է և պիտի մնայ: Սրտի և խղճի մտք իմաստասիրելով յիշեալ տեսութիւնը՝ ոչ այլ ինչ եզրակացութեան ենք գալիս, եթէ ոչ յարութեան և յաւիտենական կեանքի պատկերացման: Կան բանասէրներ անգամ, որոնք ժամանակակից լեթարգիական քունը համարած են ստուերական ապացոյցներ յարութեան իսկութեան: Արդեօք տիեզերքի մէջ այս եզական իրողութիւնը, այս փառաւոր զաղափարը ունի՞ իւր պատմական բաժինը՝ թէ ոչ. այսինքն կան նշաններ պատմութեան էջերում հաստատող յարութեան լինելութիւնը եթէ ոչ: Կան, և ամենազբաղական կերպով արտայայտուած և ոչ թէական կամ կասկածաւոր: Թերթեցէք բոլոր հին ազգերի քաղաքակրթութեան ոկզբնական էջերը և կը գտնէք համոզիչ ապացոյցներ յարութեան վերաբերութեամբ, բայց ես կանգ կ'առնեմ միայն Աստուծոյ ընտրեալ ազգի պատմութեան վրայ, բանգի ընդունուած է՝ այս սրբազան կամարների տակ ա-

ուսելապէս սրբագործուած պատմութեան վրայ յենուիլ: Յիշում էք որ տառապող աշխարհի ժամանակաւոր չարչարանաց դատապարտուած և մարդկային աչքից հեռու ընկած ժամանակն իսկ՝ արդար Յովբը մըմնջում էր. կը գան ըոպէսներ «Յարուցանել զմորթ իմ, որ կրեաց զայս ամենայն»։ Կոպիտ է արտայայտութեան ձեւը, բայց պարզ է և անշուշտ մարգարէական: Կամ չէ՞ք մոռացել քնարերգակ բանաստեղծ թագաւորի հեռաւոր ակնարկութիւնը, «Կարգացես առ իս յաւուր նեղութեան քո, ես փրկեցից զքեզ» և դու փառաւոր արացես զիս»: Իսկ Նսային ուղղակի և պարզ է յիշում, սուսնց ակնարկութիւնների կամ նուրբ ասացուածքների. «Յարիցեն մեռեալք և կանգնեսցին որ իցեն ի գերեզմանս»: Նոյնպէս է արտայայտում և առիւծների ճանկերից հրաշափառ ազատուած մարգարէն, «Եւ բազումք ի ննջեցելոց ի հող երկրի յարիցեն, ոմանք ի կեանս յաւիտենականս և ոմանք ի նախատինս»: Եւ այսպէս ուշիմ և շնորհալի իմաստասէրը շատ կէտեր կարող է գտնել հնգամատեանի մէջ, իսկ նոր կեանքի մատեանը ամբողջապէս լի է յարութիւն հաստատող, յարութիւն քարոզող պատմութիւններով. «Քանզի փող հարկանի և մեռեալք յարիցեն», կամ «Ամեն ամեն ասեմ ձեզ, եթէ ոչ հատն ցորենոյ անկեալ յերկիր մեռանիցի, ինքն միայն կայ, ապա թէ մեռանիցի բազում արգիւնս առնէ»: Ի՞նչ խորհր-

դաւոր և պատկերաւոր հրահանգ յարութեան: Սոյնպէս և շարունակեցին նրա բոլոր աշակերտները թէ՛ աւագները և թէ՛ կրտսերները. «Զայրագնեալք վասն ուսուցանելոյ նոցա ժողովուրդն և պատմելոյ Յիսուսիւ զյարութիւն մեռելոց»։ Կամ թէ՛ «Օտարոտի իմն դից թուի պատմիչ լինելոյ, քանզի զՅիսուս և զյարութիւնն աւետարանէր»։ Զձանձրացնելու համար կարճենք փաստերի և աւետարանական վկայութիւնների թելը:

Այժմ ի՞նչ էք կարծում, ունկնդիր և յարութեան ձայնով՝ յարութեան քարոզով յուզուած և ակնապիշ յառած հասարակութիւն, միթէ ի՞նքը մեր Տէրը միայն իւր անձի միջոցով աշխարհին սովորեցրեց, ոչ նա ինքը և անհուն բազմութեան առաջ օրինակներով ապացուցեց: Յուշ լիցի ձեզ Նայինի այրու յարուցեալ զաւակը և Բեթանիայի այրում որոտացող ձայնը բազմաթիւ սրգաւոր և հետաքրքրուող բազմութեան առաջ՝ «Ղազարէ, արի եկ արտաքս»: Զորս օրուայ մեռած Ղազարոսը վերացաւ, պատանները քանդուեց և ողջ առողջ ման եկաւ ննջեցեալ: Բաւ չէ՞ն արդեօք փաստերը և օրինակները: Կարծես հէնց այս պատմական և վկայեալ դէպքերի համար է որ քրիստոնեայ վերծանողը ասում է, — Նա որ զմի գանգ մեռեալ յարուցանէ, կարէ յարուցանել նա և զամենայն ննջեցեալս: — Այս ձայնն է, որ արծազանք է գտնում անհուն շնորհների տէր Շնորհալու քնարի թրթիռների վրայ. «Որ ի դժոխս իջեր

ներքին, ի բանտ մահու և խաւարին, կապեալ զիշխանն մահածին, հաներ զհոգիս որ ի բանտին»:

Ուրեմն կասկած չկայ, «քանզի փող հարկանի և մեռեալք յարիցեն», կասկած չկայ, որովհետեւ բնութիւնը համայն է մեզ վկայ: Ուրեմն հաւատացեալ եղբայրներ, զօրացրէք ձեր հոգիները, ամրացէք և վերանորոգուեցէք յարութեան կատարելութեամբ: Իսկ դուք թերահաւատներ, որ սովոր էք աշխարհի կեղծ և աղի աղբիւրներից լցնելու ձեր սափորը, թող այսուհետեւ լցուի այն յստակ և ակնապարար աղբիւրից, որի ակն կրում է իւր Վրայ «Քրիստոս յարեալ» սքանչելի բառերը: Այն յարութիւնը, որը արտայայտելու համար երկնքի և երկրի համայն երաժշտութիւնն է հարկաւոր: Մխիթարուեցէք ուրեմն որդեկորոյս հայրեր և մայրեր, զի ձեր սիրասուն գաւակները վեր կը կենան, դուք կը տեսնէք ձեր անձկալուոյն երեսը: Այն մատները և աներեւակայելի ձեռները, որ երկաթէ դռները փշրեց, սալէ դարպասները քանդեց, այն նաեւ կը փշրէ ձեր բազմամեայ փաթաթուած հողախշտիները, և դու հողի փոխանակ նրան կը փառուիս և նրան կը պագնես: Այրիացեալ էին, մի լար այն պատկերի կորստեամբ, որն այնքան ջերմ սեղմել ես կրճբիդ: Ո՛րբեկներ, մի լայք՝ ձեր սիրասուն մայրիկի անոյշ և անոյշ համբոյրները կը ստանաք և կը հովանան ձեր մատաղ սրտերը: Անցան սգոյ և լալոյ ժամանակները, եղ-

բայրներ և քոյրեր, այժմ յարութեան տօների մէջն ենք և նրա կենդանարար ճառագայթներով ապրում և զուարճանում: Ո՛վ բաբախող սրտեր, դուք որ այս պահուս ձեր այրուած աչքերից արտասուքների շիթեր էք թափում, տարէք այս մեծ համբաւը, տարէք, շուտ տարէք, քարոզեցէք վշտահար սգաւորներին, որ սրբեն իրանց արտասուքները, զի յարութիւնն է ամեն տեղ, ամեն կողմ:

Ասացէք ամեն ուրեք, որ ձեր մեռեալները կը յառնեն, բաց կ'անեն ծալած թեւերը, փրկուած վեր կը կենան, և կը թռչին արեգակի լոյսի մէջ: Ոհ, այս լոյսը տարէք վառեցէք այն հանգած օջախներում, որ տեղ ճրագը վաղուց է մարել. վառեցէք լապտերը այն սգաւորի, որ մահուան ստուերների հովտից խարխափելով և լալահառաչ անցնում է:

Հաւատացրէք ամենին, որ կը փչէ փողը, և կորած՝ անհետ կորած սիրելիները յարութիւն կառնեն, ծովի անյատակ անդունդներից, արծուի որկորներից, առիւծի կողերից, հողմերի ծալքերից, կը կենդանանան և երկնքի փառքը կը տեսնեն: Ասացէք ամենին, Քրիստոս ինքը՝ մարդ եղած է, իւր խաչով մարդն է խաչուում, մահուամբ մարդըն է մեռնում, յարութեամբ մարդն է յառնում: Ուրեմն թող հեռանայ, անհետ և անդարձ հեռանայ տարակուսութեան մոլեգին ոգին:

Տուէք այս աւետիսը բոլոր դասակարգներին

անխտիր, տուէք հարստին և աղքատին, տնան-
կին և մեծատան, արդարին և մեղաւորին, մեծին
և պզտիկին:

Միայն և միայն այն ժամանակ մեր կեանքը
ազնիւ և երջանիկ կը լինի: Եւ այն ժամանակ
յարութեան շնորհը, որպէս մայիսեան ցօղ զը-
ւարթ կը ցօղէ մեր արեւակէզ ճակատները վրայ,
քանի որ մեր սրտերում յարութեան լոյս կը
վառուի, աստուածային շնորհներն ու պարգե-
ները միշտ անպակաս կը լինին մեզնից թէ այ-
ժըմ և թէ յաւիտեանս, ամէն:

ՆԵՐՍԷՍ ՔՅՆՅ. ՏԷՐ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

(Բարու)



ՀՀ Ազգային գրադարան



ADP.

2-902